ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» փետրվարի 2023 թ. N 07-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ա որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «Դոնսելխոզվոդստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Կոտայքի և Գեղարքունիքի ՋՕԸ սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնում/կառուցում» և «Շիրակի, Թալինի, Եղեգնաձորի և Սյունիքի ՋՕԸ սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնում/կառուցում» օբյեկտներում քաղաքաշինական գործունեության թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Բնակելի հասարակական և արտադրական» և «Հիդրոտեխնիկական» ենթատեսակների համար:

2. Թույլտվության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի օգոստոսի 30-ը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2/7/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ